

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

N 06-Ն

N 793-Ն

“ 20 ” հունիսի 2025 թվական
ք. Երևան

“ 24 ” հունիսի 2025 թվական
ք. Երևան

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ
ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՏ
ԿԱՊՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին»
օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Ն Ք՝

1. Սահմանել

1) Պետական եկամուտների կոմիտեի կողմից Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը տրամադրվող տեղեկությունների շրջանակը և տրամադրման կարգը՝ համաձայն Հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից մինչև բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցությունների տրամադրման համար նախատեսված հարթակի (benefits.hightech.gov.am) (այսուհետ՝ Հարթակ) լիարժեք ինքնաշխատ գործարկմանը հաջորդող 30-րդ օրացուցային օրվան հաջորդող աշխատանքային օրը, սույն որոշման 1-ին կետով սահմանված տեղեկությունների տրամադրման նպատակով Պետական եկամուտների կոմիտեն Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության համար ապահովում է արտաքին օգտվողի ժամանակավոր մուտքի հնարավորություն՝ Պետական եկամուտների կոմիտեի անալիտիկ-վերլուծական

համակարգին (BI-business intelligence), որի միջոցով Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը տվյալներ է ստանում՝ Հավելվածի Ձև 2-ի համաձայն:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:


ՄԻՆԻՍՏՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ


և

**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

1. Սույնով սահմանվում է Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն) «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի շրջանակներում Կառավարության 2025 թվականի ապրիլի 17-ի N 450-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) պետական աջակցությունների տրամադրման կամ մերժման համար հիմք հանդիսացող հարկային մարմնի հաշվառման տեղեկատվական բազայում առկա տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկություն) շրջանակը և դրա տրամադրման կարգը:

2. Կոմիտեի տեղեկատվական բազայից Ձև 1-ով սահմանված տեղեկությունները Որոշմամբ սահմանված Հարթակին, ԱՅՓԻ(API)-ների միջոցով, տրամադրվում են ինքնաշխատ եղանակով:

3. Մինչև, սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված եղանակով Հարթակի միջոցով Ձև 1-ով սահմանված տեղեկությունների ինքնաշխատ փոխանցումը, Նախարարությունը Ձև 2-ով սահմանված տեղեկությունները ստանում է Կոմիտեի անալիտիկ-վերլուծական համակարգից (BI-business intelligence):

4. Նախարարությունն իրավասու է ստացված Տեղեկությունները վերլուծել, ինչպես նաև դրանց վերաբերյալ Կոմիտեից և պետական աջակցության համար դիմող տնտեսավարող սուբյեկտից կատարել լրացուցիչ հարցումներ, ճշգրտումներ:

5. Պետական աջակցության վերաբերյալ Տեղեկություններ ներառող տեղեկատվությունը պահպանվում է Նախարարությունում՝ այդ նպատակների համար առանձնացված, Կոմիտեի և Նախարարության կողմից համաձայնեցված պահանջներին բավարարող սերվերների վրա՝ պաշտպանված տիրույթում:

	Տնտեսավարող սուբյեկտի Անվանումը, Կազմակերպարական տեսակը ՀՎՀՀ, գրանցման համարը,	Վերաբերելի ժամանակահատված, կամ կոնկրետ ամսաթվեր
	ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
1.	Տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ տեղեկությունների ստացում՝ Գործունեության դասակարգչի կոդ, կոդեր Գործունեության տեսակարար կշիռ Գործունեության դասակարգչի փոփոխությունները՝ հաշվետու ժամանակահատվածի և դրան նախորդող եռամսյակի Հարկման համակարգը (նաև «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 11-րդ մաս)	Այո կամ Ոչ Տեսակարար կշիռներ Հարկման համակարգը
2.	Դիմումի ներկայացման օրվան նախորդող օրվա դրությամբ Տնտեսավարող սուբյեկտի հարկային պարտավորության 100000 ՀՀ դրամը գերազանցելու մասին տվյալ	Այո կամ Ոչ Տվյալներ/Չափ
3.	Տնտեսավարող սուբյեկտի մասնագիտական աշխատանք կատարող աշխատակիցների մասով տեղեկությունների ստացում՝ Միգրանտ	Քանակը Աշխատողի վերաբերյալ տվյալներ
	Նոր աշխատող	• Անուն ազգանուն, • ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք, • անձնագիր կամ նույնականացման քարտի տվյալներ, • աշխատանքային պայմանագիր, • ՀՀ քաղաքացիության առկայություն (այո/ոչ), • տնտեսավարող սուբյեկտի մոտ աշխատանքի ընդունվելու ամսաթիվը, • մինչև 2022թ. մարտի 1-ը ԱՎՈՒՄ-ի մասին նշում (այո/ոչ), • դիմելու օրվա դրությամբ աշխատողի՝ գործատուի մոտ աշխատելու հավաստում (այո/ոչ) • ԶԳԴ (պաշտոնի և զբաղմունքի կոդ) • ԱՎՈՒՄ • ՔԻՊ (ԱՎՈՒՄ) • հաշվարկված եկամտային հարկի չափ (ԳՀ/ՓՄ որակված աշխատանքների շրջանակում)
		• Անուն ազգանուն, • ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք, • անձնագիր կամ նույնականացման քարտի տվյալներ, • աշխատանքային պայմանագիր,

		• տնտեսավարող սուբյեկտի մոտ աշխատանքի ընդունվելու ամսաթիվը • նոր աշխատողի աշխատանքային պայմանագրերի վերաբերյալ (նշել բոլոր գործատուների տվյալները՝ Նախկին գործատուի՝ 1) ՀՎՀՀ 2) ՏԳԴ-ն դիմելու օրվա դրությամբ) 3) ՏԳԴ տեսակարար կշիռը դիմելու օրվա դրությամբ 4) ՏԳԴ-ն աշխատանքային գործունեության ընթացքում, 5) ՏԳԴ տեսակարար կշիռը աշխատանքային գործունեության ընթացքում, 6) աշխ. սկիզբ-ավարտ • դիմելու օրվա դրությամբ աշխատողի՝ գործատուի մոտ աշխատելու հավաստում (այո/ոչ) • ԶԳԴ (պաշտոնի և զբաղմունքի կոդ) • ԱՎՈՒՄ • ՔԻՊ (ԱՎՈՒՄ) • Հաշվարկված եկամտային հարկի չափ (ԳՀ/ՓՄ որակված աշխատանքների շրջանակում)
4.	Տնտեսավարող սուբյեկտի կողմից ներկայացված վերապատրաստված մասնագիտական աշխատանք կատարող աշխատակիցների մասով տեղեկությունների ստացում, այդ թվում՝ Վերապատրաստված միգրանտ Վերապատրաստված նոր աշխատող	Աշխատողի վերաբերյալ տվյալներ (Անուն ազգանուն, ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու վերաբերյալ տեղեկանք, Անձնագիր կամ նույնականացման քարտի տվյալներ) Աշխատանքային պայմանագիր Վերապատրաստված միգրանտի և Վերապատրաստված նոր աշխատողի դեպքում Տեղեկության նկարագրությունը տրամադրվում է Միգրանտի և Նոր աշխատողի ձևաչափով
5.	Տնտեսավարող սուբյեկտի քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանք կատարողների մասով տեղեկություն	Այո կամ Ոչ Տվյալներ
6.	Հաշվետու ժամանակահատվածի համար տնտեսավարող սուբյեկտի հաշվարկված եկամտային հարկի գումարը	Տվյալներ

